



Աշխարհին մէջ ամենէն անբաւական կուրսիւնը՝ կա- մաւոր կուրսիւնն է:

Անդուսպ կիրք մը, և օրինաց և իրաւանց տեղ՝ բիրտ ուժով նպատակաւոր կամք մը իշխեցունելու բա- ցարձակ ցաւ մը, զօրեղագոյն տարրերն են մարդկային բարբարոսութեանց, որ եթէ մի ժամանակ նիւթական յա- ջողութեան մը գոհացումը կուտայ իւր հեղինակներուն, բայց իւր տգեղ կուրսիւնը երբէք չիրնար ծածկուիլ, ճշ- մարտութեան, իրաւանց և պատուոյ դասաստանին ահաբ- կու գորութեանն առջև:

Այս գորութիւնը հանրութեան կարծեաց մէջ է: Բաւական է որ այդ կարծիքը գտնուի բաւական նիւթ ի- բաց ստոյգ որպիսութիւնն ըմբռնելու համար:

Տ. Մկրտիչեան կը ծանուցանէ նաև թէ՛ «Մեր (Ի- բնաց, «Թաղականեան») գործերու տեղեկագիրը ամէն յարակից մանրամասնութեամբ հաղորդեցի՛մ թաղ- խորհրդին ու յէս ֆինուքեան վաւերացուց զայն:»

— Այս վաւերացումը չէ անշուշտ որ պիտի փոխեր յիշեալ գործերուն ինքնայայտ արժեքը, թէպէտ եւ միւրեւնոյն գործերը՝ իրենց որպիսութեան համեմատու- թեամբ, ապահովապէս կրցան փոխել հասարակաց կար- ծիքը թաղական խորհրդոյն վրայ:

«Բայց դժգոհ Պ. Շնորհաբանը (կը յաւելու Տ. Մը- կրտիչեան), յանդիմանութիւն ունեցաւ ազգային իշխանու- թեան դէմ ելլել, քովը գտնուած գրամը, արժեթուղիները, հաշիւները մինչև այսօր բովը պահած է, ո՛չ իսկ թաղ- խորհրդոյ վսեմ. Աստուածատու փաշային կ'ուզէ յանձնել զայնս:»

Ճշմարտութեան, իրաւանց և պատուոյ հաւատարիմ մնալ յանդիմանութիւն մը չէ՛ այլ պարտք մը, և հակառակ Տ. Մկրտիչեանի հաստատութեան՝ թաղական խորհրդոյ Աստուածատու վսեմ. Պողոս փաշա Նուպարին ոչինչ կը պարտիմ բայց եթէ խորին երախտագիտութիւններ իւր մի քանի առիթներով պաշտօնակցացուց և ինձ նուիրած բարձր համարման և պատուաբեր խրատոյցներով անհերքելի ա- պացոյցներուն համար:

Ստիպուած եմ հրապարակու յայտարարել նաև թէ Տ. Մկրտիչեան իւր յօդուածին վերջաբանին մէջ դիտա- ւորեալ կերպով մը Նորին վսեմութեան անունը յիշատա- կելով, չարաչար կը գործածէ այդ անուան աղբեցութիւնն իբրև ոչ մը իւր գրութեան մէջ տիրող ոգոյն, զոր այս- պէս՝ կը ջանայ ներկայացունել իւր ընթերցողաց իբրև ներշնչեալ կամ զեթ վաւերացեալ վսեմ. Պողոս փաշայի թոյլտուութեան:

Ահաւասիկ ճշմարիտ յանդիմանութիւն մը որ մինչև այսօր ժամանակ ժամանակ գործուած է Տ. Լ. Մկրտիչ- եանի և կուսակցացը կողմէ՛ անպատիժ, օգուտ բարոյե- լով մթութեանն որով պաշարուած են ընդհանրապէս այս- պիսի գործերը և գործողները Աղեքսանդրիոյ ազգային հրապարակին վրայ:

Իմ պաշտօնին օրինօք գծեալ պարտականութիւնները և իրաւունքներն իմ ոյժս են անոնց կիրառութեան դէմ եկող դատապարտելի արգելքներուն յանդիման, ըլլայ՝ «Թաղականեան խումբ»ի մը կողմէ, ըլլայ՝ նոյն ինքն թաղական խորհրդոյ մը կողմէ յարուցուած, եթէ երբէք:

Ինչնէ որ պաշտօնակցացս և իմ ամբողջ տարեկան գործունէութեան մը համարատուութիւնն ընկերութեան օ- րինաւոր Ընդհանուր ժողովոյն կողմէ չի լսուի, չի ճնշուի և չ'ընդունուի՝ ոչինչ չեմ յանձնել ոչ ոքի:

Ինչնակող «Թաղականեան խումբին» կողմէ տրուած սխալ տեղեկութիւններու և զրգիւններու շնորհիւ՝ թաղա- կան խորհուրդը, նոյն իսկ պաշտօնական գրերով, սպառ- նալիօք պահանջեց մեզմէ այդ բաները. և ամիսներ ան- ցան անկէ ի վեր, որք պաղեցուցին այդ անխորհուրդ ձեռնարկներուն ետանդը:

Աղք. Բարեգործական ընկերութեան կանոնադրը մինչև որ չիփոխուի անոր մէջ նախատեսեալ միջոցներով,

իբրև օրինաւոր Տնօրէն ժողով նոյն ընկերութեան՝ պաշ- տօնակիցքս և ես, չունինք ուրիշ օրէնք բայց միայն նոյն կանոնագիրը ինչպէս որ է, և թաղ. խորհրդոյ վաւերացումը կանոնագրէն զուրս և կանոնագրին հակառակ ո և իցէ մէկ կարգադրութեան մը չիրնար երբէք ունենալ օրէնքի ոյժը:

Համարառու մարմին մը չիրնար մերժել, կամ աւելի ճիշդը մեր պարագային մէջ՝ համարառու մարմին մը չը կրնար արգելադրել ոչ ոքէն՝ ընդունելու իրեն համարատու մարմնոյ մը համարատուութիւնը, և այս մարմնոյն պաշ- տօնին օրինական լրմանն ազիւ չիրնար անոր օրինաւոր յաջորդաց ընտրութիւնը կատարուիլ այլապէս բայց եթէ համաձայն՝ գոյութիւն ունեցող յատուկ օրինաց:

Ինչո՞ք պայմաններու մէջ առկա մնացած աւանդ մը ոչ ոքի չի յանձնուիր, մանաւանդ ապօրինաւոր մար- մնոյ մը ձեռքը, և առանց կանխապէս օրինաւոր ընտու- թեան և ընդունելութեան զայն արտադրող հաշուոց:

Այս անուր բանաբարութեանց բնական հետեանք- ներէն է Տ. Լ. Մկրտիչեանի այն հրապարակային յայ- տարարութիւնը, որով մի քանի հաւատացողներ, կ'ըն- դունիմ թէ, կրնան գտնուիլ, քանի որ իր ստորագրու- թեան երաշխաւորութեամբ կը հաստատէ զայն, թէ՛

«Պ. Շնորհեան ձեռք տրած է Աղ. ընկերու- թեան վերջին ներկայացուան հատարներէն մնա- ցած 200 աւելոյ ուկոյ մօտ գումարին վրայ, այնպէս որ հիմնայ յիշեալին ֆոյ մօտաւորապէս 250 ուկոյ արժողութեամբ զաւանգան գոյքեր կը մնան:»

Ինչնէ այստեղ իմ յառաջ բերած զօրաւոր և ան- հերքելի իրողութիւններով հակառակը ապացուցուած պատ- մութեանցը համար չզործածած բառս՝ Տ. Լ. Մկրտիչեան կը բնագրատէ զին անպատճառ արտասանեմ զայն, այս անգամ իրեն արժանի ընկերակիցն և բարեկամէն Տ. Կա- րապետ Ժամկչեանէն ա՛լ աւելի լրութեամբ ուղղելով ինձ անհարկն նախատինք մը . . . . .

ՍՈՒՏ Է Տ. Լ. Մկրտիչեանի այդ խօսքն ալ, վաս և անորզ զրպարտութիւն է այդ՝ իրեն և իւր նմանեացը միայն արժանի . . . . .

Պաշտօնակցացս և իմ բով Աղք. Բարեգործական ընկերութեան հաշուոյն աւանդ պահուած գումարը 12/23 Մարտ 1900էն ի վեր չէ եղած գանկ մ'աւելի քան ե- ղիպտական ոսկի տասն և մէկ, չորս զահկան և հինգ ու կէս հազարոգ: Իսկ, արժեթուղիներն են հինգ Բուժ- լի Երկաթուղեաց պարտաթուղիներ որ առաջին օրէն Օս- մանեան կայս. Դրամատան մօտ ի պահ զրուած են, ըստ վաւերագրի որ մեր բով է:

Մեր հաւատարիմ և օրինաւոր անխաւաղ տոմար- ներուն մէջ արձանագրուած են ասոնք կանոնաւոր և կա- տարեալ կերպով, արդարացուցիչ թուղթերու հետ բա- ցարձակապէս համընթաց: Գննիչ Յանձնաժողովն իւր տե- ղեկագրովը հաստատած է զայս անգամ մը, և պատրաստ եմք ընդունիլ աներկիւղ անոնց կրկին և կրկին ընտու- թեան ենթարկումն:

Դ

Այ բաւ են ա՛յսչափ փաստեր, ա՛յսչափ ապացոյցներ: Չկարծուի սակայն թէ սպառած է անոնց առատ պաշարը: Տակաւին ձեռքս կը գտնուին շատեր և ո՛չ նը- ւազ գօրաւորներ, շատ յարգելի վկայութեանց վրայ հիմ- նուած, որոց թուումն ուրիշ բանի չպիտի ծառայէր այլ անվերջանալի ընել արգէն շատ և շատ երկարած գրու- թիւնս:

Կը վերապահեմ զայնս յաջորդ տեսութեան մը զոր յարմար առթիւ մը պիտի նուիրեմ, ինչպէս արգէն ըսի ի վերև, մասնաւորապէս քաղաքիս «ազգային գործերու ընդ- հանուր վիճակ»ին ընտրութեան:

Աշխարհիս ո՛ր կողմը տեսնուած է հասարակութեան մը ծառայութեան մէջ գտնուող վարձկան պաշտօնեայ մը որ զայն ներկայացունող մարմնոյն բարոյական պատա- խանատուութիւնը խաղի մէջ գնելով, և անոր աչքին տակ, յայտնապէս, և լրագրական հրատարակութեան միջոցաւ, այսպիսի անպատկառ և գոհակի զրպարտութիւններով, նախատինք սփռել նոյն հասարակութեան ամենէն պատ- ուաւոր և յարգելի անդամոցը մէկ մասին վրայ, անոնց՝ միւրեւնոյն հասարակութեան օգտին նուիրած անձնագոհ և խղճամիտ վաստակոցն առթիւ, և անոր այսպիսի գատա- պարտելի արարից ներդրմանութեամբ թոյլատրուի . . . . .

Մարդու մը ամենէն մտերիմ և ամենէն նուիրական էութեանը դէմ՝ յանուն հակառակութեան, յանուն թըշ- նամութեան, յանուն անձնական կամ կուսակցական շա- հերուն, անյուր զրպարտութեանց գէնքերով յարձակում գործել, և ա՛յնպիսի եղանակներով որ՝ բարձր և յարգելի անձնաւորութեանց թոյլտուութեան և համաձայնութեան ապացոյցներու առերևոյթ գոյութիւնը կարենայ աղբեցու- թիւն ընել միամիտ, կամ անտարբեր, կամ անտեղեկ անձնաց բազմութեան վրայ, անխրատութեան, վատութեան, շարութեան ծայրագոյն ոճիրն է որուն վրայ ամեն պար- կեշտ և ուղղագատ մարդու և մասնաւորապէս Աղեքսանդ- րիոյ թաղական խորհրդոյն խորին ուշադրութիւնը կը հը- րաւիրեմ անխոր:

Տ. Լ. Մկրտիչեանի անմիջական պետերէն՝ թա- ղական խորհրդէն՝ կը պահանջեմ հրապարակու տալ թէ՛ իւր և թէ՛ ընդհանուր հասարակութեան պատինն այս կերպով արատաւորող պաշտօնէին՝ հարկ եղած օրինակելի պատիժը:

Ինչ որ ալ ըլլան թիրիմացութիւններէ կամ ո և իցէ այլ պարագաներէ յառաջ եկած անձնական հակակրու- թիւններ որք կը տիրեն թաղական խորհրդոյ կարեւորու- թեան և յարգանաց արժանի անդամոցը և մեր, բարե- կամացս և իմ, միջև, չունիմ կասկած որ հաւատարիմ իրենց պատուոյն և արժանեաց, յիշեալ թաղական խոր- հրդականները ներկայ պարագային մէջ ցոյց պիտի տան իրենց անաչտուութեան և հօգույ մեծութեան ապացոյցները, զի իրենք կը կազմեն այսօր Աղեքսանդրիոյ մէջ «Աղք. փոխանորդարար ներկայացոյցող, և Աղք. և ազգայնոց փոխարարձ պարտեաց կանոնաւոր կատարմանը տեսուչ ու մատակարար կարգեալ իշխանութեան» Ազգային վար- չութեան», մասնական ճիւղերէն մին:

Ամէն Հայ պարտաւոր է գիտնալ և յարգել Հայոց Ազգային Սահմանադրութեան Հիմնական Սկզբնոց առա- ջինն, որ հետեւեալն է.

« ԱԶԳԻՆ ԱՄԷՆ ՄԷԿ ԱՆՀԱՏԸ ԱՌ ԱԶԳԸ « ՊԱՐՏԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ. ԱԶԳԻՆ ԱՂ ԻՐ « ԿՈՂՄԷՆ ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԱՄԷՆ ՄԷԿ ԱՆՀԱՏ « ՊԱՐՏԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻ. ԴՈՒՐՁԵԱՂ ԱՄԷՆ « ՄԷԿ ԱՆՀԱՏ ԻՐԱՍՈՒՆԻՔՆԵՐ ՈՒՆԻ ԱԶԳԷՆ ԵՒ « ԱԶԳԻՆ ԱՂ ԱՆՀԱՏՆԵՐԷՆ: « ՈՒՍՏԻ, ԱԶԳԻՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆՔ ՓՈՒԱԴԱՐՁ « ՊԱՐՏԵՐՈՒ ԿԱՊՈՒԱԾ ԵՆ ԻՐԱՌՈՒ ՀԵՏ. ԱՆԱՆԿ « ՈՐ ՄԷԿԻՆ ՊԱՐՏԱՌՈՒԹԻՒՆՔԸ ՄԻՒՍԻՆ ԻՐԱ- ԻՈՒՆՔՆ ԵՆ:»

Իմ կողմէ յառաջ բերուած այս անհամար և ինք- նապացոյց փաստերուն գիտահատութիւնը, և անոնց կըրտ, կացութիւնները անգամ մը եւս Պատ. Ընթերցողաց ա- նըրպառ դատաստանին կը յանձնարարեմ:

Յ. Յ. ՇՆՈՐՀԲԵԱՆ

Օգոստոս 1900

Վ Ե Ր Ձ

Տպարան ՄիոՒԹԻՒՆ, Թ. Ս. Փափագեանի



Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՍՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՍԱՑ

ՏԵՐ ԵՒ ՏԵՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

